

**Դիանա ԱԴԻԿՅԱՆ**

Երևանի Վ. Բոյունովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան

**ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՈՒՅԹՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ՝ ԻԲՐԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ**

Ճարտասանական դարձույթները գեղարվեստական ստեղծագործության և, առհասարակ, լեզվի անբաժանելի մասն են կազմում: Դրանք առկա են գրեթե բոլոր լեզուներում, սակայն լեզվից լեզու փոխանցվելիս կարող են նույնությամբ չպահպանվել: Երբեմն հեղինակային ասելիքը կարող է ավելի ճիշտ փոխ հասնել, եթե թարգմանիչը կիրառի ոչ բառացի, բայց համարժեք թարգմանություն: Բնագրային դարձույթը, փաստորեն, թարգմանվելիս կարող է պահպանվել նույնությամբ, արտահայտվել մեկ այլ դարձույթով կամ էլ ոճապես չեզոք միջոցով: Բոլոր դեպքերում, ճարտասանական դարձույթների թարգմանության ժամանակ կատարվում է միջմշակության փոխներթափանցում՝ հնարավոր բոլոր հետևանքներով:

**Բանալի բառեր.** ճարտասանական դարձույթ, ճարտասանական հարց, ճարտասանական բացականչություն, ճարտասանական դիմում, միջմշակության ներթափանցում, համարժեք

Համաշխարհային մշակույթը բազմաճյուղ ու համապարփակ հասկացություն է: Կազմված լինելով առանձին ազգային մշակույթների համակցումից՝ այն սոսկ դրանց մեխանիկական միաձուլումը չէ, այլ ըստ արժանվույնի համագոյակցումն ու փոխազդեցությունը: Այս առումով դժվար է թերագնահատել որևէ մեկ առանձին մշակույթի դերն այս ամբողջության մեջ, քանի որ ամենաչնչին իսկ թվացող մասնիկի խաթարումը կամ կորուստը բերում է ընդհանուրի փոփոխությանը:

Լինելով մշակույթի մի առանձին ճյուղ՝ գրականությունը ևս անմասն չէ միջմշակության փոխգործակցության այդ բարդ ու պատասխանատու գործընթացից: Ավելին, գրականությունը, առավել, քան մշակույթի որևէ այլ ճյուղ, լայն հնարավորություններ է ընձեռում կուտակված մշակության գանձարանի փոխանցման և փորձի փոխանակման առումով: Եվ եթե մշակույթի այլ ճյուղի դեպքում արվեստի որևէ պատառիկ մյուս մշակույթ է անցնում նույնական կամ շատ քիչ փոփոխված ձևով, ապա գրականության դեպքում օտարազգի ստեղծագործությունը կարող է այն աստիճան հոգեհարազատ հնչել, որ ազգային մշակույթի տարր դառնա: Եվ դա՝ շնորհիվ «թարգմանություն» կոչվող արվեստի:

Թարգմանությունն առաջին հերթին լեզվական գործընթաց է, որը, սակայն, ենթադրում է իմացության տարբեր որակների առկայություն: Այն սերտորեն կապված է նաև ոչ բանասիրական գիտությունների հետ: Ըստ ռուս հայտնի թարգմանիչ և մանկավարժ Մինյար-Բելորուչևի՝ «թարգմանության գործընթացը մի լեզվի միավորները մի այլ լեզվի միավորներով փոխարինում չէ: Թարգմանության գործընթացը՝ որպես երկու լեզուների օգտագործմամբ հաղորդակցության յուրահատուկ բաղադրիչ, միջմշակութային գործունեություն է: Նրանում ամփոփվում են փիլիսոփայության, հոգեբանության, բնախոսության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների խնդիրները՝ չխոսելով լեզվաբանության մասին, որից թարգմանության կախվածությունն ակնհայտ է և ապացուցման կարիք չունի»: Մինյար-Բելորուչևը թարգմանության տեսությունն ըմբռնում է որպես երկլեզվյան հաղորդակցության գիտականորեն հիմնավորված կադապար /Миньяр-Белоручев, 1966: 200/:

Փաստորեն, թարգմանության ընթացքում համադրվում են ոչ միայն տարբեր լեզուների լեզվական տարրեր, այլև դրանց գիտությունն ու մշակույթը, կոլորիտն ու ազգային մտածողության առանձնահատկությունները՝ դրանով իսկ բարդացնելով թարգմանիչ գործը: Կախված այս կամ այն ժողովուրդի ազգային լեզվամտածողության առանձնահատկություններից՝ լեզվական միևնույն միավորը տարբեր լեզուներում կարող է միակերպ չդրսևորվել՝ որոշակիորեն ազդելով թարգմանության գործընթացի և դրա որակի վրա:

Ինքնին հասկանալի է, որ կատարված թարգմանության որակը կարող է կախված լինել մի շարք գործոններից՝ տեքստի բարդություն, թարգմանիչ արհեստավարժություն և այլն: Ի թիվս կատարվող ցանկացած թարգմանության մեջ թարգմանիչ ունեցած դերի ճիշտ գնահատման տեսակետների՝ ճշմարիտ է հնչում հետևյալ կարծիքը, որ արտահայտել է ռուս գրականագետ Լյուբիմովը՝ «Թարգմանիչի համար իդեալը հեղինակի հետ միաձուլումն է: Բայց միաձուլվել հեղինակի հետ՝ չի նշանակում նրա ստրուկը դառնալ» /Любимов, 1982: 125/: Թարգմանիչն ազատ է միջոցների ընտրության հարցում: Կարևորը բոլոր դեպքերում թարգմանվող նյութի համարժեքության պահպանումն է:

Հարցն ավելի է բարդանում, երբ խոսքը վերաբերում է գեղարվեստական տեքստը կազմող այնպիսի միավորների, ինչպիսիք են լեզվաարտահայտչական միջոցները (բանադարձումները), մասնավորապես՝ ճարտասանական այն դարձույթները, որ հատուկ դեր են կատարում տվյալ ստեղծագործության համատեքստում: Լայն առումով վերցրած՝ լեզվաարտահայտչական այն միջոցները, որ ոճագիտության մեջ անվանում են հռետորական կամ ճարտասանական դարձույթներ, հիմնականում կազմում են լեզվի ինտոնացիայի ուսումնասիրման մի մասը, նրա դրսևորման առանձնահատուկ այն ձևերը, ինչպիսիք են ճարտասանա-

կան հարցը, ճարտասանական բացականչությունը և ճարտասանական դիմումը /Եզեկյան, 2007: 355/:

Ճարտասանական դարձույթների թարգմանության խնդիրը մեր կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանանում, քանի որ դրանք, նույնիսկ արքետիպային նույն սկզբնաղբյուրից ծագած լինելով, տարբեր լեզուներում, հաճախ ունենում են միմյանցից տարբեր հնչերանգային և հուզափմաստային երանգավորումներ: Օրինակ, ճարտասանական հարցը անգլերենում կարող է դրսևորվել շեշտադրությամբ, իսկ հայերենում՝ հարցական նշանով: Այստեղ առանձնապես կարևորվում է, ինչպես նշվեց, թարգմանչի արհեստավարժությունը՝ նրա լեզվամշակութային իմացության մակարդակը և լեզվաոճական տվյալ արտահայտության կամ բանադարձման համակողմանի ընկալման ու այլ լեզվական միջոցներով փոխանցելու կարողությունը, թարգմանաբանության միջգիտակարգային բնույթի հստակ հաշվառումը /Catford, 1965: 147/:

Մյուս կարևորագույն գործոնը, լեզվամշակութային և ժանրային առանձնահատկությունների համադրումն է, երբ տեքստային յուրօրինակ միավորները դիտարկվում են իբրև լեզվամշակույթի և ժանրային «հիշողության» առկայացումներ՝ տրված հեղինակի կողմից՝ նրա աշխարհայացքային ու բարոյագեղագիտական հայեցակերպի համաձայն:

Ճարտասանական դարձույթների թարգմանության խնդրին անդրադառնալիս մեզ կարող է մեծապես օգնել այնպիսի գրողի ստեղծագործական արվեստի ուսումնասիրությունը, որի ստեղծագործությունները հագեցած են խնդրո առարկա լեզվաարտահայտչական միավորներով՝ ճարտասանական դարձույթներով: Այդպիսի հեղինակ է անգլիացի հայտնի վիպասան Չարլզ Դիքենսը: Դիքենսյան արվեստը, հագեցած լինելով երկխոսության, հերոսների հուզական սրված վիճակի բազմաթիվ հատվածներով, լայն հնարավորություն է ընձեռում ճարտասանական դարձույթների կենսագործման համար:

Ճարտասանական դարձույթների թարգմանությունը միջմշակութային փոխներթափանցման իրական դրսևորում է: Դրանց թարգմանության ժամանակ ևս մեկ անգամ ապացուցվում է այն փաստը, որ խնդրո առարկա դարձույթների միջև անանցանելի պատնեշ չկա: Ավելին, երբեմն դրանցից մեկի ընտրության անհնարինության պայմաններում շատ հանգիստ կարելի է օգտվել մյուսից՝ միաժամանակ չխաթարելով թարգմանվող տեքստի գեղագիտական արժեքը: Քննարկենք թարգմանական նման «կամուրջների» մի շարք տարբերակներ՝ հենվելով դիքենսյան արձակի վրա:

Նետկյալ օրինակը հագեցած է բացականչություններով, որոնցից մեկը հայերեն թարգմանվել է հոետորական հարցումով.

*"Who can describe the pleasure and delight, the peace of mind and soft tranquility, the sickly boy felt in the balmy air, and among the green hills and rich woods, of an island village! Who can tell how scenes of peace and quiteude sink*

*into the minds of pain-worn freshness, deep into their jaded hearts! Men who have lived in crowded, pent-up streets, through lives of toil, and who have never wished for change* (Dickens, 1955, p. 319):

«Որքան խաղաղ էր այնտեղ, որքան ամոքիչ դալար բլուրների ու փարթամ անտառների խնկաբույր օդը: Ո՞վ կարող է նկարագրել այն ամենը, ինչ զգաց խեղճ, հիվանդագին երեխան այդ հեռավոր գյուղի վեժ լուսության մեջ: Ո՞վ կարող է ընթռնել այն անհուն երջանկությունը, որ համակեց նրա մանկական հոգին: Մի՞թե կարելի է պատմել, թե հեղձուցիչ վայրերում ապրող հոգնաբեկ մտքերի վրա ինչպես են ներգործել խաղաղ ու անդորր տեսարանները, և դրանց թարմությունը ինչպես է թափանցել այդ խոնջած սրտերից ներս» (Դիկենս, 1958, էջ 260-26):

Վերոբերյալ օրինակում, ինչպես պարզ երևում է, Մասեյանը հռետորական բացականչությունները նախընտրել է թարգմանել հարցերով՝ բացականչական թողնելով միայն առաջին նախադասության սկզբնամասը, որը թարգմանիչը տրոհել է ու տվել իբրև առանձին նախադասություն: Թարգմանիչը, ըստ մեզ, կատարել է լեզվաարտահայտչական միջոցների ճիշտ ընտրություն, քանի որ դիքենսյան խոսքի այդ պատառիկը հայերենով հնչում է նույնքան սահուն և ազդեցիկ, որքան բնագրում է:

Թարգմանաբանության դիրքերից քննենք «Դեյվիդ Քոփերֆիլդ» վեպից ստորև բերված հատվածը, որտեղ Դեյվն ասում է՝

*You mustn't marry more than one person at a time, may you, Peggotty?* (Dickens, 1850, p. 48).

*Մարդը չի կարող ամուսնանալ միաժամանակ մեկից ավելի մարդկանց հետ, այնպես չէ՞, Փեգոթի': (թարգմ.՝ Դ. Ադիկյան)*

Ոճականորեն առանձնահատուկ երանգավորում ունեցող անգլերենին հատուկ ընդհանուր, մասնավոր, երկընտրական և տրոհված հարցերը հաճախակի են նաև այնպիսի կենցաղագրական բնույթի տեքստերում, ինչպիսիք են դիքենսյան տեքստերը: Վերոբերյալ օրինակում առկա տրոհված հարցը մեր կողմից թարգմանվել է դարձյալ տրոհված հարցով, միայն թե բառային այլ ընտրությամբ: Անգլերենին այնքան բնորոշ տրոհված հարցը, այսպիսով, նախընտրելի է թարգմանել ոչ թե ստորոգյալի՝ հակառակ բնույթով կրկնության (հաստատական կամ ժխտական), այլ՝ «*ճիշտ չէ՞*», «*այդպես չէ՞*» և նման հարցական արտահայտություններով:

*'Is your brother an agreeable man, Peggotty?' I inquired, provisionally. 'Oh, what an agreeable man he is!' cried Peggotty, holding up her hands* (Dickens, 1850, p.48).

- *Քո եղբայրը վստահելի՞ մարդ է, Փեգոթի', - հեղաքրքրվեցի ես ձեռքի հետ:*

- *Օ՛հ, այն էլ ինչպիսի՞ վստահելի,- բացականչեց Փեգոթին՝ սեղմելով իր ձեռքերը: (թարգմ.՝ Դ.Ադիկյան)*

Դարձյալ «Դեյվիդ Քոփերֆիլդ»-ից բերված ճարտասանական բացականչության այս հատվածը մենք թարգմանել ենք միևնույն դարձույթի օգնությամբ, միայն թե՛ բառային որոշակի ընտրությամբ: Կարծում ենք՝ հայերենով ճիշտ չէր հնչի, եթե *What an agreeable man he is!* նախադասությունը բառացի թարգմանեինք՝ *Ի՛նչ վստահելի մարդ է նա*: Ոչ բառացի թարգմանություն ենք կատարել նաև *provisionally* (բառացի՝ *ժամանակավորապես*) բառի նկատմամբ՝ նախընտրելով «*ձեռքի հետ*» դարձվածքը: Այն, մեր կարծիքով, հայերեն ավելի ճիշտ և տեղին է հնչում և առավելագույնս հաղորդում է այն ներիմաստը, որ ամփոփել է հեղինակն այս հատվածում: Փաստորեն, վերոբերյալ օրինակով ի ցույց դրվեց նաև բառ – դարձվածք զույգի՝ իբրև թարգմանական միավորների այլընտրանքայնության «*մեկը մյուսի փոխարեն գործածվելու*» հնարավորությունը:

«Դոմբի և որդին» վեպից ստորև բերվող հատվածում հանդիպում ենք թարգմանական մեկ այլ տարբերակի:

*‘His father’s name, Mrs Dombey, and his grandfather’s! I wish his grandfather were alive this day!’ (Dickens, 1848, p. 3).*

- *Հոր անունն է, միսիս Դոմբի, և պապի անունը: Ես կուզեի, որ նրա պապը այսօրվա օրս կենդանի լիներ* (Dickens, 1957, էջ 4):

Բերված օրինակի բնագրային տարբերակում ունենք ճարտասանական բացականչություն, որ հայերեն է թարգմանվել (թարգմ.՝ Մ. Ավագյան) պայմանական եղանակի բայածևով: Ստացված տարբերակը վատ չի հնչում հայերեն, բայց կա գրողի կերտած ճարտասանական դարձույթի կորուստ: Դրանից հնարավոր կլիներ խուսափել, եթե թարգմանիչը նախընտրեր օգտվել «*երանի՛*» բառից (*Երանի՛ նրա պապն այսօր էլ կենդանի լիներ*):

Մեկ այլ օրինակ էլ ներկայացնենք Դիքենսի «Մեծ հույսեր» վեպից՝

*‘I have only been to the churchyard,’ said I, from my stool, crying and rubbing myself.*

*‘Churchyard!’ repeated my sister. ‘If it warn’t for me you’d have been to the churchyard long ago, and stayed there. Who brought you up by hand?’*

*‘You did,’ said I.’ (Dickens, 1861, p. 14).*

- *Ես միայն գերեզմանոց եմ գնացել, -ասացի իմ նստած տեղից՝ լաց լինելով և շփելով մարմնիս ցավող մասերը:*

- *Գերեզմանոց, - կրկնեց քույրս: - Ես որ չլինեի, դու շարք վաղուց գերեզմանոցում կլինեիր, այդտեղ էլ կմնայիր հուր – հավիտյան: Ո՞վ է դաստիարակել քեզ իր ձեռքերով:*

- *Դուք, - պատասխանեցի ես (Դիքենս, 1983, էջ 9):*

Բնագրային ճարտասանական դարձույթը թարգմանիչը (թարգմ.՝ Վ. Փարթամյան) հայերենին է փոխանցել ճիշտ նույն կերպ՝ ճարտասանական բացականչության միջոցով: Դարձույթների առումով, փաստորեն, այստեղ ոչ մի շեղում չունենք: Միայն երկու հատվածում

թարգմանիչը սեփական նախաձեռնությամբ բառային հավելումներ է արել՝ դիքենսյան խոսքը գուցե առավել պատկերավոր վերարտադրելու մտայնությամբ: Այսպես, myself (բառացի՝ ինքս ինձ) բառը նա թարգմանել է «մարմնիս ցավոտ մասերը», իսկ դրանից երկու նախադասություն հետո տեքստում ավելացրել է «հուր – հավիտյան» արտահայտությունը: Մեր կարծիքով թարգմանական այս հավելումները այնքան էլ տեղին չեն և առանց այդ բառերի էլ տեքստը ամբողջական է հնչում:

Քննարկենք ևս մեկ օրինակ նույն վեպից.

*'It's the young man!' I thought, feeling my heart shoot as I identified him (Dickens 1861, p.28).*

«Ընց այն երիտասարդ բարեկամն է», - մտածեցի ես, և սիրտս ծակեց այս հայտնությունից (Դիքենս, 1983, էջ 18):

Բերված օրինակում թարգմանիչը ճարտասանական բացականչությունը փոխարինել է պատմողական նախադասությամբ, ինչը, ըստ մեզ, սխալ է: Ամեն դեպքում, թարգմանելիս պետք է աշխատել հնարավորինս պահպանել ոչ միայն թարգմանվող նյութի բովանդակություն, այլև ձևի կողմը, մանավանդ, եթե դա հնարավոր է: Ի վերջո, տեքստային յուրաքանչյուր միավոր, նախքան թղթին հանձնվելը, անցնում է այն ստեղծող հեղինակի ներաշխարհի, գիտակցության ու զգացմունքների միջով և նոր միայն հայտնվում թղթին: Եվ եթե հեղինակը նմանատիպ ինքնապրումից հետո գտել է, որ հերոսը տվյալ պահին բացականչում է, ուրեմն դա իրոք այդպես է: Ինչևէ, քննարկվող օրինակում թույլ տրված սխալից հնարավոր էր խուսափել, եթե թարգմանիչը գեթ փոքր-ինչ ինտոնացիա ավելացներ իր գրած նախադասությանը, որ գրավոր խոսքում կարող է դրսևորվել բացականչական նշանի օգնությամբ (*Ընց այն երիտասարդ բարեկամն է*):

Դիտարկենք թարգմանաբանական հետաքրքրություն ներկայացնող ևս մեկ ուշագրավ օրինակ՝

*'He was a world of trouble to you, ma'am,' said Mrs. Hubble, commiserating my sister. 'Trouble?' echoed my sister; 'trouble?' (Dickens, 1861, p. 46).*

- Հավանաբար նա ձեզ ծով հոգսեր է պատճառել, տիկին, - կարեկցելով քրոջս՝ ասաց միսիս Հաբբլը:

- Հոգսե՛ր, - արձագանքեց քույրս: - Հոգսե՛ր (Դիքենս, 1983, էջ 29):

Եթե «Օլիվեր Թվիստի արկածները վեպից քիչ առաջ բերված օրինակում հոնտորական բացականչությունը թարգմանված տարբերակում փոխարինվել էր հոնտորական հարցով, ապա այս օրինակում ճիշտ հակառակն է՝ հոնտորական հարցն է փոխարինվել բացականչությամբ: Այս դեպքում կատարված այլընտրանքային փոփոխությունը, թերևս, տեղին է, քանի որ հարցականի դեպքում մենք գուցեև ունենայինք ոչ թե ճարտասանական, այլ հավաստիական հարցում: Նման դեպքերում հարկ է նախապատվությունը տալ ճարտասանական դարձույթի ընտրությանը՝

ելնելով այն պարզ իրողությունից, որ այն, ամեն դեպքում, ոճապես ավելի պատկերավոր է, քան սովորական հարցական նախադասությունը:

Բերված օրինակում հետաքրքրություն է ներկայացնում նաև մակդիրային մեկ արտահայտության թարգմանություն: *A world of trouble* (մի աշխարհի հոգս) արտահայտությունը հայերեն է թարգմանվել իբրև «*ծով հոգսեր*»: Ե՛վ աշխարհը, և՛ ծովը, լինելով տարածականորեն ընդարձակ աշխարհագրական երևույթներ, ունեն շատության արժեք, և թարգմանչի կողմից մեկը փոխարինվել է մյուսով: Համենայն դեպս, հայերենում երկու տարբերակն էլ հնարավոր է, իսկ անգլերենում՝ ոչ:

*O Heavens, it had come at last! He would find it was weak, he would say it was weak, and I was lost! (Dickens, 1861, p. 47).*

Օ՛, Աստված իմ, ի վերջո պատուհասը եկավ: Հիմա նա կիմանա, որ օղին ջրիկ է, նա կասի, որ ջրիկ է, և ես կորած եմ (Դիքենս, 1983, էջ 29):

Բերված օրինակում թարգմանիչը նույնությամբ վերարտադրել է գրողի կերտած ճարտասանական բացականչությունը՝ փոփոխություն կատարելով բառակազմի մեջ միայն: Ելնելով փոխանունության պարունակող – պարունակյալ կապից՝ թարգմանիչը *Heavens* (երկինք) բառը թարգմանել է իբրև *Աստված*: Ընտրված տարբերակը, թերևս, իսկապես ավելի դիպուկ է հնչում հայերեն և սխալ չի կարող դիտվել, մանավանդ որ *Heavens*-ը՝ իբրև հատուկ անուն, այլ բան չի էլ կարող նշանակել:

Արքետիպային ձևերի թարգմանությունը մի ուրույն հետաքրքրություն է ներկայացնում, որոնց ևս արժե անդրադառնալ: Թվում է, թե ստորև բերվող հատվածում չկան արքետիպային ձևեր, որ դրանք սերում են Աստվածաշնչից կամ գրական-գեղարվեստական այլևայլ ժանրերից, *my love* (*հոգյալս*) և *child* (*մանկիկ*) անվանումներն ունեն իրենց աստվածաշնչյան և նախնական իմաստավորումները, իսկ բացականչությունները և հարցումները՝ գրական – ժանրային իրենց նմանակները.

*“Rose, my love!” cried Mrs Maylie, rising hastily, and bending over her. “What is this? In tears! My dear child, what distresses you?”*

*“Nothing, aunt; nothing,” replied the young lady. I don’t know what it is; I can’t describe it; but I feel...”*

*“Not ill, my love?” interposed Mrs. Maylie (Dickens, 1955, p. 324).*

- Դո՛ւգ, հոգյա՛լս, - ճչաց միսիս Մեյլին, խուճապահար վեր կենալով և կռանալով աղքկա վրա: - Ի՞նչ է պատահել: Արցուքներ: Սիրելի մանկի՛կս, ի՞նչ է տանջում քեզ:

- Ոչ մի բան, մորաքույր, ո՛չ մի բան, - պատասխանեց դեռատի լեդին: - Չգիտեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ, նկարագրել չեմ կարող, բայց զգում եմ...

- Չլինի՞ հիվանդ ես, հոգյա՛լս, - ընդհատեց միսիս Մեյլին» (Դիկենս, 1958, էջ 265):

Բերված օրինակում ճարտասանական դարձույթներն իրականացնում են հեղինակի կողմից առաջադրված ասույթի խոսողական – կատարողական ուժը (illocutionary force)՝ ներգործման գեղագիտական գործառույթը, և դրանով իսկ հավաստում, որ լեզվաոճական ու լեզվարտահայտչական միջոցները պետք է դիտարկել՝ համատեքստից նրանց կախվածության և համատեքստային պայմանավորվածության տեսանկյունից:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ լեզվաարտահայտչական միավորները կամ ճարտասանական դարձույթները մեկ լեզվին պատկանող հասկացություններ չեն, այլ, ընդհակառակը, հանդիսանում են միջմշակութային և միջտեքստային ներթափանցման ինքնատիպ միջոցներ: Դրանց դրսևորման առանձին օրինակներ կարող են որևէ կոնկրետ լեզվամշակույթի հարստությունը լինել կամ էլ, ընդհակառակը, ընդհանուր լինել մի քանի կամ բոլոր լեզուների համար:

Ճարտասանական դարձույթների թարգմանությունը ևս մեծ հմտություն և զգուշավորություն է պահանջում: Այս կամ այն արքետիպային ձևը թարգմանելիս հարկավոր է նախապես կատարել մի փոքրիկ հետազոտություն՝ պարզելու համար, թե թարգմանվող լեզվական միավորը «թիրախ» լեզվում ևս ընդունելի՞ է, և այն էլ՝ նույն կերպ, թե՞ ոչ: Այս դեպքում կարևորը թարգմանելիս համարժեքության պահպանումն է, իսկ դա ենթադրում է այնպիսի որակի թարգմանություն, որ և՛ բնագիրը չտուժի, փոխանցվի իր լեզվազաղափարական ողջ յուրահատկություններով հանդերձ, և՛ ընդունելի ու հասկանալի լինի «թիրախ» լեզվամշակույթի տիրույթում:

Հռետորական դարձույթների թարգմանության ժամանակ հնարավոր են տարատեսակ թարգմանական փոխանցումներ: Գրողի ստեղծած որևէ կոնկրետ դարձույթ թարգմանչի կողմից կա՛մ կարող է (և ցանկալի է) նույնությամբ թարգմանվել, կա՛մ փոխարինվել մեկ այլ դարձույթով և կա՛մ արտահայտվել ոճապես չեզոք նախադասությամբ (օրինակ՝ պատմողական): Ամեն դեպքում, թարգմանական ցանկալի տարբերակը տվյալ դեպքում հեղինակային լեզվաարտահայտչական միջոցի նույնական վերարտադրումն է, սակայն եթե դա հնարավոր չէ, թարգմանիչը կարող է և ընտրել խնդրի լուծման ամենաընդունելի տարբերակը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Catford J. C. A Linguistic Theory of Translation. An Essay in Applied Linguistics. London: Oxford University press, 1965.
2. Dickens Ch. Dombey and Son. London: Bradbury & Evans, 1848.
3. Dickens Ch. David Copperfield. London: Bradbury & Evans, 1850.
4. Dickens Ch. Great Expectations. London: Chapman & Hall, 1861.
5. Dickens Ch. The Adventures of Oliver Twist. M., 1955.



6. Любимов Н. Перевод – искусство. М.: «Советская Россия», 1982.
7. Миньяр-Белоручев Р. К. Теория и методы перевода, М., 1966.
8. Դիկյան Զ. Դոմբի և որդին, Երևան, ՀՍՍՌ հրատ., 1957:
9. Դիկյան Զ. Օլիվեր Թվիստի արկածները, Երևան, «Հայպետհրատ», 1958:
10. Դիրենս Զ. Մեծ հոյսեր, Երևան, «Սովետական գրող», 1983:
11. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ, 2007:

**Д. АДИКЯН – Перевод риторических конструкций как выражение межкультурного взаимодействия.** – Риторические конструкции являются неотъемлемой частью произведения искусства и языка, в целом. Они используются во всех языках, но не всегда сохраняют ту же форму при переходе с одного языка на другой. Иногда слова автора могут быть выражены намного точнее, только в случае если они не переведены дословно. При этом условии оригинальная риторическая конструкция может быть сохранена. Во всех случаях во время перевода риторических конструкций имеет место межкультурное взаимодействие со всеми возможными последствиями.

**Ключевые слова:** риторическая конструкция, риторический вопрос, риторическое восклицание, риторическое примечание, межкультурное взаимодействие, эквивалент

**D. ADIKYAN – The Translation of Rhetoric Clauses as an Expression of Intercultural Interplay.** – The rhetoric clauses are an inseparable part of the workart and the language, in general. They are available in almost all languages but not always can be maintained in the same form while transferring from language to language. Sometimes the author's words may be more accurate if the translator uses non-literal, but equivalent translation. The original clause, thus, can be preserved in the same way, expressed in another clause or even with a neutral medium. In all cases, the translation of rhetoric clauses brings about a cross-cultural interaction with all its possible consequences.

**Key words:** rhetoric clause, rhetoric question, rhetoric exclamation, rhetoric application, cross-cultural interaction, equivalent